# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «24» սեպտեմբերի 2025թ. ժամը 10:00-ին:

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝** Վ. Բաբայան

**Հանձնաժողովի անդամներ՝** Գ. Ղազարյան, Ի. Գաբրիելյան, Ն. Սարգսյան, Հ. Մինասյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Ա. Մնացականյան

1. **Տեղեկություն՝ «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման օրվա և ժամի մասին**

1.1 Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 14-րդ օրը՝ 23.09.2025թ. ժամը 10:00-ին

1.2 Հայտը բացվել է էլեկտրոնային համակարգի միջոցով

1.3 Հակադարձ աճուրդը սկսվել է հայտը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ 24.09.2025թ., ժամը 10:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

2. **Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտերով սահմանված սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Գնվելիք ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Թոկենների ամպային ծրագրային ապահովում | 14 170 000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

3. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և տվյալները

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը և կապի միջոցները |
|---|---|---|
| 1. | «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ղափանցյան 3<br>Էլ.փոստ՝ arm.gov.info@gmail.com<br>Հեռ. +374 77 567260 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցում չի ստացվել, հետևաբար պատասխան չի տրամադրվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

6. «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները՝

Չափաբաժին 1: «Թոկենների ամպային ծրագրային ապահովում»

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 11808333 | 20 % | 14169999.6 | 11808333 | 20 % | 14169999.60 |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 24.09.2025թ. և Համակարգի կողմից ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

7. <u>Տվյալներ՝ ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության/ առկայության մասին</u>

«ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) և իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.3):

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

8. <u>Տվյալներ ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին</u>

«ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.3) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

9. <u>Գնահատող հանձնաժողովը որոշեց՝</u>

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ԱՐԹ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

3. Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ուղարկել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով՝ տուժանքի տեսքով, ինչպես նաև ստորագրել և ուղարկել, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ Վ. Բաբայան

**Անդամներ՝** _____ Գ. Ղազարյան

_____ Ի. Գաբրիելյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

**Քարտուղար՝** _____ Ա. Մնացականյան